ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 28

«13» 02 2021թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 54 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով՝ թիվ 2 կայազորի զինվորական դատախազության հավաքարարի 1 թափուր հաստիքը կրճատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության տնտեսագետի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի հունիսի 10-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի փետրվարի 10-ի N 10 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 54 հրամանի 2-րդ հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին բաժնի 2-րդ գլխի 3.1-րդ կետի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության տնտեսագետ 4» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության տնտեսագետ 5», իսկ նույն գլխի «**Ընդամենը 5**» բառերը՝ «**Ընդամենը 6**» բառերով,

2) 1-ին բաժնի «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 131»*** բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 132»*** բառերով,

3) 4-րդ բաժնի 52-րդ գլխի 205-րդ կետի «Հավաքարար 1» բառերը փոխարինել «Հավաքարար 0», նույն գլխի «Ընդամենը 2» բառերը՝ «Ընդամենը 1», իսկ «**ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում 5**» բառերը՝ **ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում 4**» բառերով,

4) 4-րդ բաժնի «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 59***» բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 58***» բառերով,

5) 5-րդ բաժնի «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 131»*** բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 132»***, իսկ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 59***» բառերը՝ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 58***» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին ու դատախազին, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ